ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա2» կետով.

«ա2) Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար.»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 10-րդ կետի «ժ» ենթակետի «կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու» բառերը փոխարինել «կատարողական վաղեմության ժամկետը վերականգնելու» բառերով.

2) 11-րդ կետի «ժ» ենթակետի «կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու» բառերը փոխարինել «կատարողական վաղեմության ժամկետը վերականգնելու» բառերով:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.2-րդ հոդվածով.

«Հոդված 9.2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափը

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափով.

1. Կատարողական վարույթի մասնակիցներին վարույթի նյութերից պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար՝	բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով»:

Հոդված 4. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 9-րդ կետի «ա» ենթակետի «կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու» բառերը փոխարինել «կատարողական վաղեմության ժամկետը վերականգնելու» բառերով.

2) 12-րդ կետի «վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու» բառերը փոխարինել «վճիռը հարկադիր կատարման ներկայացնելու» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:~~2025 թվականի հուլիսի 1-ից~~: